community

The New Apostolic Church around the world

04/2021/AM

Այն, ինչն իսկապես կարևոր է

Խմբագրական
Փրկությանը համահունչ

Ժամերգություն
Սուրբ Հոգին առաջնորդում է

Եկեղեցական ուսմունք
Տղամարդու և կնոջ հավասարությունը
/ Մաս 2-րդ/

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Փրկությանը համահունչ

Ժամերգություն

4 Ոչնչից՝ նոր բան - Սուրբ Հոգին առաջնորդում է

Մանկական անկյուն

10 Աբրահամը խնդրում է Սոդոմ քաղաքի համար

12 Այցելություն Թաբիթհային՝ Թեմայում/ Գանա/

Տեսություն

14 Տղամարդու և կնոջ հավասարությունը / մաս 2/

Ընդհանուր լուրեր

18 Կանանց ձեռնադրություն – Որոշման ուղին

Տիտղոսաթերթի նկարը՝ Ֆրանկ Շուլդթի
Շապիկի ետևի նկարը՝ Մարսել Ֆելդեի

Փրկությանը համահունչ

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

ի՞նչն է իսկապես կարևոր: Մարդկային կյանքում այս հարցը հաճախ է տրվում, իսկ որպես առաջարկություն հաճախ հնչում է այս միտքը՝ եկեք կենտրոնանանք էականի վրա:

Հիսուսի աշակերտները ևս պետք է դա սովորեին՝ եթե նրանց տեղեկացրած լուրը պետք է մարդկանց հասներ, ապա նրանք պետք է կենտրոնանային էականի վրա: Մնացած ամեն ինչը, ինչպես օրինակ, անմեղության պատվիրանի կամ թլպատման վերաբերյալ հրեական պատկերացումները նրանք պետք է մի կողմ թողնեին, որպեսզի հասանելի լինեին մարդկանց, քանի որ դա փրկությանը համահունչ չէր լինի:

Նույնն է այսօր նաև մեզ համար: Մենք պետք է փրկության լուրը Հիսուս Քրիստոսով տեղեկացնենք բոլոր մարդկանց: Դա կլինի միայն այն դեպքում, եթե մենք կենտրոնանաք միայն էականի վրա: Այն ամենը, ինչը կապված է մեր անձի, մեր պատմության և մշակույթի հետ, փրկությանը համահունչ չէ: Դա մենք պետք է առանձնացնենք, եթե մենք ուզում ենք տեղեկացնել փրկությանը վերաբերող Հիսուս Քրստոսի ուսմունքը: Երկրային վարքականոնները կարող են փոխվել, իսկ փրկության մասին լուրը մնում է:

Մեր երեխաների պարագայում ևս կարևոր է, որ մենք նրանց գիտակցել տանք, թե ինչն է իսկապես համահունչ փրկությանը: Մենք չպետք է նրանց ստիպենք ապրել այնպես, ինչպես մենք ենք ապրում: Խոսքը նրա մասին է, որ նրանք կարողանան ապրել Աստծու ներկայությունը, ինչպես մենք ենք ապրում Աստծուն: Դա է կարևորը:

Սրտանց ողջույններ՝

Ձեր՝ Ժան Լյուք-Շնայդեր

Ոչնչից՝ նոր բան – Սուրբ Հոգին առաջնորդում է

Ցյուրիխ- Զեբեխի / Շվեյցարիա/ եկեղեցին լի էր՝ կորոնայի պայմաններին համապատասխան անվտանգության կանոնների պահպանմամբ, իսկ շատ հավատացյալներ օգտագործում էին հեռախոսը, Յու-Թուբը և այլ հնարավորություններ ժամերգությունը տոնելու համար

Լուսանկարները՝ Բերնհարդ Հոլբեների

Հռոմեացիներին 8,14

Որովհետև նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիները:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, անգամ այս դեպքում, երբ մենք այս Հոգեգալստյան տոնը ոչ սովորական ձևով ենք տոնում, պահպանում ենք մեր հաճելի ու գեղեցիկ ավանդույթը և սկսում ենք այն Աստվածաշնչից հատված ընթերցելով: Այն կընթերցեն մեր թարգմանիչները:.

Ընթերցանություն Հովելի 3,1,2-ից և Եփեսացիների 3, 14-21-ից

Եվ կլինի այնպես, որ սրանից հետո իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա, կմարգարեանան ձեր տղաներն ու աղջիկները, ձեր ծերերը երազներ կտեսնեն, և ձեր երիտասարդները տեսլիքներ կունենան: Այն օրերին իմ Հոգուց կհեղեմ իմ ծառաների վրա, իմ աղախինների վրա:

Ահա թե ինչու ծնկի եմ գալիս մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առաջ, որից իր անունն է ստանում ամեն ազգատոհմ երկնքում և երկրի վրա, որպեսզի դուք ըստ իր փառքի մեծության իր Հոգու միջոցով զորությամբ ամրանաք ներքնապես, այնպես որ, ձեր հավատի միջոցով, Քրիստոս բնակվի ձեր սրտերում, և դուք սիրո մեջ արմատավորված հաստատված լինեք, որ կարողանաք հասկանալ բոլոր սրբերի հետ, թե ինչ է լայնությունը, երկարությունը, բարձրությունը և խորությունը, այսինքն՝ ճանաչեք Քրիստոսի սերը, որ գերազանց է, քան ամեն գիտություն, որպեսզի լցվեք Աստծո լրիվ ամբողջությամբ: Ուրեմն, նրան, որ կարող է ավելին անել, առավել առատությամբ, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք և մտածում ըստ այն զորության, որ գործում է մեր մեջ- նրան փառք եկեղեցում Քրիստոս Հիսուսով, բոլոր ժամանակներում, հավիտյանց հավիտենից: Ամեն:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ինչպես արդեն նշվել է, մենք այս Հոգեգալստյան տոնը չենք կարող սովորականի նման տոնել: Անցած տարի ես չէի կարող պատկերացնել, որ մենք երբևէ Հոգեգալստյան տոնը այս ձևով կապրենք: Տարվա ընթացքում ամբողջ աշխարհում, եկեղեցում և մեր անձնական կյանքում այնքան շատ բաներ տեղի ունեցան, որոնք մենք չենք կարող բացատրել: Մենք դրան պատրաստ չէինք, այն տեղի ունեցավ ամբողջովին անսպասելի, և մենք հարցնում ենք մեզ, թե ինչու Աստված թույլ տվեց այս ամենը: Եվ ես պետք է ամբողջովին անկեղծ ասեմ՝ մենք չգիտենք, ես չգիտեմ, ոչ ոք չգիտի: Մենք չենք կարողանում Աստծուն հասկանալ: Բացի այդ, մենք պետք է նրան վստահենք ու մենք որոշել ենք այդպես էլ վարվել: Քանի որ մենք ճանաչում ենք Աստծուն և գիտենք, որ նա այն միակն է, ով, ինչպես նշված է աստվածաշնչյան ընթերցանության մեջ ,, կարող է ավելին անել, առավել առատությամբ, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք և մտածում ,,/ Եփես. 3,20/: Դրան հավատում ենք և դրանում մենք համոզված ենք: Նա կարող է մեր պատկերացումներից վեր ամեն ինչ անել, նրա համար սահմաններ չկան:

Նրա սերը շատ ավելի զորեղ է, քան մենք կարող ենք պատկերացնել:

Նրա սերը շատ ավելի հզոր է, քան մենք կարող ենք պատկերացնել: ,, Ըստ այն զորության, որ գործում է մեր մեջ,,/ Եփես. 3,20/, ինչպես շարունակության մեջ է գրված, մենք կարող ենք այն ապրել: Աստված սեր է: Նա աշխատում է մեր փրկության համար և նա գործում է մեր մեջ: Հոգեգալստյանը հայտնվում է Սուրբ Հոգի Աստվածը, և իհարկե նրա ներկայությունն ու նրա զորությունը տպավորիչ ձևով ակնհայտ է դառնում: Աշակերտներն ու բազմությունը լսում են հզոր փոթորկի ձայն և տեսնում են կրակե լեզուներ: Եվ հանկարծ նրանց համար հնարավոր է դառնում օտար լեզուներով խոսելը: Դրանք մեծ ուժի նշաններ էին: Հետագայում, երբ մարդիկ ընդունում են Սուրբ Հոգու շնորհները, դրանք ուղեկցվում են հզոր նշաններով /հմտ. Գործք առաքելոց 2, 1-4/, նշաններ, որոնք մարդկանց պետք է համար պարզ դարձնեին, որ Սուրբ Հոգին ներկա է և գործում է:

Այս ազդեցիկ նշանները պահպանվում էին մի որոշ ժամանակ: Ավելի ու ավելի շատ էր Սուրբ Հոգին գործում այլ ձևերով, նա սկսում է ներգործել նրանց հոգիների ու սրտերի վրա, ովքեր մկրտված ու կնքված էին, և այսպես է նա գործում նաև մեզ համար և մեր մեջ: Սուրբ Հոգին գործում է մեր մեջ մեր հոգու փրկության համար: Մենք կարողանում ենք մասամբ տեսնել այդ գործելու ազդեցությունները, քանի որ , եթե նա կարողանում է ծավալել իր գործունեությունը, ապա փոխվում է մեր պահվածքը: Քանի որ Սուրբ Հոգին գործում է եկեղեցում, փոխվում է հավատացյալների պահվածքը: Նրա գործունեության մյուս մասը անտեսանելի է: Սուրբ Հոգին մաքրում է մեզ, սրբացնում է մեզ, զտում է մեզ: Դա մենք չենք կարող տեսնել, դա տեսնում է միայն Աստված: Մենք կարողանում ենք վստահել Աստծուն, ով զորությամբ է գործում մեր մեջ:

Սուրբ Հոգին ցանկանում է մեզ նվիրել հոգու փրկություն: Շատ մարդիկ, ովքեր չեն կարողանում ունենալ քրիստոնեական հավատ, փրկության այդ պատկերացումը չեն հասկանում, օրինակ, նրանք ասում են. ,, Դուք ուզում եք միայն, որ ձեր անդամները մնան եկեղեցում: Դուք բացատրում եք նրանց, որ նրանք պետք է փրկվեն և, որ կյանքը երկրի վրա սարսափելի կլինի ու միայն տանջանքներով լի: Հետո մարդիկ գալիս են եկեղեցի, որպեսզի փախչեն այդ արցունքաբեր հովտից,,:

Մյուսներն ասում են. ,, Դուք մարդկանց ասում եք, որ նրանք այնքան սարսափելի են, որ Աստված նրանց պատժելու է: Այդ պատժից խուսափելու միակ ճանապարհը հավատացյալ լինելն է,,: Սակայն, սիրելի եղբայրներ և քույրեր, դա բոլորովին փրկության մասին մեր ըմբռնումը չէ, մենք ձգտում ենք բոլորովին այլ փրկության: Քրիստոսը մեր ապագան է: Մեր փրկությունը կայանում է նրանում, որ նմանվենք Հիսուսին: Մենք պետք է դառնանք նրա

նման, սա է մեր նպատակը, սա է այն փրկությունը, որին մենք սպասում ենք: Հիսուսն առանց մեղքերի էր, նա միշտ խաղաղություն ուներ իր սրտում, նա ամեն ինչ հաղթահարում էր առանց ուժի: Ինչ էլ տեղի ունենար, Հիսուսը միշտ հսկողության տակ էր առնում իր ճակատագիրը: Նա ի վիճակի էր սիրել կատարյալ ձևով: Մեր նպատակն այն է, որ մենք ցանկանում ենք նմանվել Հիսուսին, և կատարյալ ձևով սիրել, ճակատագիրը հսկողության տակ դնել, որպեսզի առանց ուժի հաղթենք չարին և մեր սրտերում կատարյալ խաղաղություն ունենանք: Մեր փրկությունը փախուստ չէ, այն կատարյալ ավարտ է: Եվ հենց սրա մեջ է կայանում Հոգու աշխատանքը: Սուրբ Հոգին գործում է մեր մեջ, որպեսզի մեզ դարձնի Հիսուսի նման: Սուրբ Հոգի Աստվածը արարչագործության ոգին է, նոր արարածի Արարիչը: Ջրով մկրտվելու և Հոգով կնքվելու միջոցով նա լիովին նոր բան է ստեղծում մեր մեջ: Մենք ծնվում ենք վերստին և դառնում Քրիստոսով նոր արարածներ – սա Սուրբ Հոգու մեծագույն գործն է:

Սուրբ Հոգին ուժի ոգին է: Նա մեզ Հիսուսի նմանվելու ուժ է տալիս: Ամեն ոք, ով ընդունում է Սուրբ Հոգու ընծաները, դրա հնարավորությունը և ունակությունն է ունենում: Այն գրավականն է Հիսուսի նման դառնալ կարողանալու համար: Դրանում ոչ մի կասկած չկա: Սուրբ Հոգին ուժի ոգին է, սակայն նա այդ ուժն օգտագործում է նուրբ ձևով, նա մեզ չի ստիպում, այլ ցանկանում է առաջնորդել մեզ: Նա մեզ ասում է, թե մենք ինչ պետք է անենք և ինչ պետք է թույլ տանք, սակայն վերջնական որոշումը դրված է միայն մեզ վրա: Սուրբ Հոգին ուժի ոգին է, սակայն՝ նուրբ ուժի: Նա մեզ ցուցումներ է տալիս, առաջնորդում է մեզ և ղեկավարում:

Մեր փրկությունը փախուստ չէ, այն լիակատար ավարտ է:

Սուրբ Հոգին նաև շարժման ոգին է: Նա ցանկանում է, որ մենք առաջ շարժվենք, այստեղ ևս նա մեզ չի ստիպում, այլ՝ մոտիվացնում է: Նա մեզ հայտնում է Հիսուս Քրիստոսի փառահեղությունը և Աստծո սերը: Նա մեր մեջ Աստծո հետ միասնություն ունենալու ցանկություն է առաջացնում: Նա բացահայտում է մեզ, թե ինչ ապագա է սպասում մեզ, և հորդորում է մեզ՝ գնալ առաջ : Նա մեզ բացահայտում է Քրիստոսի էությունը, հորդորում է մեզ շարունակել աշխատել մեզ վրա և ասում է մեզ. ,, Դու կարող ես դա: Առաջ գնա, շարժվիր, կանգնած մի մնա,,: Սուրբ Հոգին շարժման ոգի է:

Քարոզը թարգմանվում և հեռարձակվում է ամբողջ աշխարհում

Արարման ոգի, ուժի ոգի, շարժման ոգի՝ թույլ տուր Սուրբ Հոգուն առաջնորդել և կառավարել քեզ: Հետևիր նրա ոգեշնչմանը: Եթե դու անես այն, ինչը նա ասում է քեզ, դու կդառնաս Հիսուսի նման: Դրանում ոչ մի կասկած չկա: Իր զորությամբ մենք կարող ենք դա անել:

Ես ասացի, որ Սուրբ Հոգին նոր արարածի ստեղծողն է, և այս տեսակետին ես ավելի մոտիկից եմ անդրադառնում: Ի՞նչ է նշանակում արարիչ լինել: Սուրբ Հոգին ստեղծում է բաներ, որոնք նախապես գոյություն չունեին: Արարիչը լիովին ինչ-որ նոր բան է ստեղծում, որը մինչ այդ անհայտ էր, և նա ի վիճակի է այն ոչնչից ստեղծել: Այդպես է Աստված ստեղծել աշխարհը - ոչնչից: Դա մի բան է, որը մենք չենք կարող անել, մարդկանց համար անհնար է ոչնչից ինչ-որ բան ստեղծելը:

Սուրբ Հոգին ամբողջովին նոր բան է ստեղծում, այն է՝ Քրիստոսի հարսնացուին: Նա հիմնում է եկեղեցի և ուզում այդ եկեղեցին իր լիակատար ավարտին հասցնել: Նրանք, ովքեր մուտք են գործում Աստծո թագավորություն, նմանվելու են Հիսուսին: Եթե մենք դա դիտարկում ենք մեր մարդկային աչքերով, պետք է ասենք, որ դա դեռ այդպես չէ: Տեսանելի եկեղեցին և նրա անդամները ամեն ինչ են, բացի կատարյալ լինելուց: Սակայն վստահիր Սուրբ Հոգուն,՝ Արարչին, նա այն կիրականացնի, և եթե մենք նրան թույլ տանք մեզ առաջնորդել, մենք կարող ենք ինչ-որ չափով նպաստել այդ արարմանը: Եթե մենք իսկապես ղեկավարվենք Սուրբ Հոգու կողմից, ապա մենք ի վիճակի կլինենք ինտեգրել ուժեղներին և թույլերին, ապա մենք ի վիճակի կլինենք միմյանց սիրել ու միմյանց ծառայել: Եկեք չվիատվենք նրանից, որ այսօր դեռ այդպես չի լինում: Եկեղեցին առաջնորդվում է դեպի լիակատար ավարտ և լինելու է անպես, ինչպես Հիսուսը կցանկանար տեսնել: Թույլ տուր Սուրբ Հոգուն կառավարելու քեզ և դու կարող ես քո բաժին նպաստը բերել այդ արարմանը, այդ հրաշալի եկեղեցու կառուցմանը, որը կհամապատասխանի մեր Տիրոջ կամքին:

Սուրբ Հոգին զորություն ունի նոր բաներ ստեղծելու, որոնք մենք առաջ չենք տեսել: Անցած ամիսների ընթացքում շատ բաներ տեղի ունեցան: Ես տեղեկացա շատ քույր-եղբայրների մասին, որոնց կյանքը լիովին փոխվել է: Մի տեղ մահացել էսիրելի մի մարդ, շատերը ծանր հիվանդ են, նրանց անձնական կյանքում անսպասելի փոփոխություններ են տեղի ունեցել կամ ուղղակի համավարակի պատճառով է փոփոխություն եղել: Նրանք հայտնվել են բոլորովին նոր իրավիճակում, որին նրանք պատրաստ չէին: Շատերը պարզապես իրենց կորցրել են, նրանք չգիտեն, թե ինչ պետք է անեն: Վստահիր Սուրբ հոգու զորությանը: Անգամ, եթե բոլորովին նոր ու անծանոթ իրավիճակ է ստեղծվել, նա քեզ համար ճանապարհ կպատրաստի, որպեսզի օրհնված ու մխիթարված լինես: Նա ուղիներ և միջոցներ կգտնի քեզ օրհնելու, քեզ խաղաղություն և ուրախություն տալու: Այդ նոր իրավիճակը նրան չի խանգարի

քեզ փրկել, քեզ Հիսուսի պատկերի նման դարձնել: Վստահիր Սուրբ Հոգու զորությանը, նա լիակատար ավարտին կհասցնի: Ես նաև շատ քույր-եղբայրների մասին գիտեմ, ովքեր տխուր են, որովհետև ոչինչ չի փոխվել: Ես մտածում են նրանց բոլորի մասին, ովքեր ծայրահեղ դժվար իրավիճակներում են ապրում: Նրանք ապրում են ուժի և քրեածին աշխարհում,այնպիսի հարաբերություններում, որը նրանք, ովքեր ապրում են Եվրոպայում, բոլորովին չեն կարող պատկերացնել: Նրանք ձգտում են փոփոխության, մի փոքր խաղաղության, ավելի քիչ անվստահության, բայց ոչինչ չի լինում: Եղբայրներ և քույրեր ես հասկանում են ձեր վիճակը: Ես կիսում եմ ձեր տառապանքը: Սակայն, ես ցանկանում եմ ձեզ առաջարկել, որ վստահեք Արարչի ուժին: Արտաքին պայմանները չեն կարող սահմանափակել նրա արարման կարողությունը: Նաև այդ սարսափելի իրավիճակում, երբ ոչինչ չի փոխվում, նա կարող է քեզ փրկել: Նա կարող է քեզ համար ճանապարհ պատրաստել, որտեղ դու կարող ես փրկվել, օրհնվել, խաղաղություն և ուրախություն ունենալ, անգամ ամենավատ պայմաններում: Թույլ տուր նրան՝ ոգեշնչել և մխիթարել քեզ:

Ես մտածում եմ նաև այն քույր-եղբայրների մասին, ովքեր եկեղեցու իրավիճակի փոփոխության հույսն ունեն: Նրանց ցանկությունը կարգին եկեղեցու շենք ունենալն է, պարզապես չորս պարիսպ, մի տանիք, մի քանի նստարան և պետքարան: Իրենց երազանքներում հավանաբար նրանք մտածում են որոշ երաժշտական գործիքներ ունենալու մասին, որպեսզի կարողանան երաժշտությունն ապահովել: Նրանք տարիներ շարունակ սպասել են դրան, բայց ոչինչ չի եղել: Ես գիտեմ, որ էլի տասնամյակներ են տևելու, մինչև բոլոր այդ համայնքները եկեղեցու մի այդպիսի հասարակ շենք ունենան, եթե դա երբևէ կլինի: Ես գիտեմ, որ դուք հիասթափված եք: Ես գիտեմ, որ դուք անգամ բարկացած և զայրացած եք: Ես խոստանում եմ ձեզ, որ մենք՝ որպես եկեղեցի մեր լավագույնը կտանք: Բայց մենք պետք է իրատեսական լինենք: Դրա համար անհրաժեշտ են տասնամյակներ: Մի մոռացեք, որ Սուրբ Հոգու ներգործությունը սահմանափակված չէ նրանով, ինչն այսօր առկա է: Նա կարող է Քրիստոսի հարսնացուին մի ծառի տակ էլ նախապատրաստել: Նրա զորությունը այնտեղ նույնն է, ինչպես մի մեծ գեղեցիկ շինության մեջ: Թույլ տուր քեզ կառավարվել Սուրբ Հոգու կողմից, նա քեզ նվիրելու է խաղաղություն, ուրախություն և փրկություն:

Այլ երկրներում մենք ստիպված ենք պատրաստվել անսովոր, նոր իրադրության պայմաններում: Մենք այնտեղ շատ համայնքեր ունենք, գրեթե յուրաքանչյուր գյուղում՝ մեկ համայնք: Մենք այնտեղ շատ քույր-եղբայրներ ունենք: Մեր հասկացողությամբ այդ ամենը պետք է շարունակվի, եկեղեցին շարունակելու է աճել, քույր-եղբայրների թիվը ավելանալու է: Մենք շատ զավակներ ունենք, ովքեր նորից շատ երեխաներ են ունենալու: Մենք կարծում ենք, որ ամեն ինչ շարունակվելու է աճել: Իրականությունը, սակայն, բոլորովին այլ է: Կարոտով և տխրությամբ հայացք գցենք դեպի անցյալ.,, Դու գիտե՞ս, թե քանի համայնք ունեինք: Գիտե՞ս, թե ինչքան երիտասարդներ ունեինք,,: Բոլոր նրանց, ովքեր տառապում են այդ իրավիճակում՝ սպասավոր եղբայրներին, առաջնորդներին, ես ցանկանում եմ ասել՝ ինձ ծանոթ են այդ մտքերը, ինձ ծանոթ է այդ ցավը: Եկեք թույլ տանք մեզ ոգեշնչվելու Սուրբ Հոգու կողմից: Նա մոտիվացնում է մեզ գնալու առաջ: Կառչած չմնաք անցյալից: Վստահեք Արարչին, նա կպատրաստի նոր ուղի, որպեսզի մեզ օրհնի և խաղաղություն ու ուրախություն տա: Թույլ տանք, որ Հոգին մեզ առաջնորդի: Նա ավարտելու է իր գործը:

Ես գիտեմ նաև, որ շատերը վախեցած են, քանի որ նրանք կարծում են, որ մեր եկեղեցում մի հեղափոխություն է նախապատրաստվում, իսկ նրանց այդ գաղափարը դուր չի գալիս: Սակայն, ոչ մի վտանգ չկա: Մենք պետք է հետևենք Սուրբ Հոգուն, նա ստեղծում է նոր բաներ, որոնք առաջ չկային: Մի մոռացեք՝ Սուրբ Հոգին միասնական է Հոր և Որդու հետ: Նա միշտ գործելու է այն շրջանակում, որը տրված է Հիսուս Քրիստոսից: Նա գործելու է Ավետարանի՝ Հիսուս Քրիստոսի ուսմունքի շրջանակում, նա գործելու է եկեղեցու

Շրջանային առաքյալ Միխայել Դեփփներ / ձախում՝ Կոնգայի Դեմոկրատական Հանրապետություն – Արևմուտք/ և շրջանային առաքյալ Լեոնարդ Ռ. Քոլը / աջում՝ ԱՄՆ/ լրացնում են գլխավոր առաքյալի քարոզը:

շրջանակում, որը հիմնել է Հիսուս Քրիստոսը, խորհուրդներով և առաքյալների ծառայությամբ, որ տվել է Հիսուս Քրիստոսը: Նա ոչինչ չի ստեղծելու, որ լինի պարզապես իր գործը: Սուրբ Հոգին միասնական է Հոր և Որդու հետ: Թույլ տանք, որ այդ Հոգին կառավարի մեզ: Այդ Հոգին եկեղեցուն տանելու է դեպի լիակատար ավարտ և լիակատար միասնություն:

Մի վերջին միտք ևս՝ մենք կարող ենք նպաստել Աստծո գործի լիակատար ավարտին նրանով, որ տեղեկացնենք Ավետարանը: Այստեղ ևս մենք ի վիճակի ենք ինչ-որ բան ստեղծելու, որը դեռ գոյություն չի ունեցել: Ոգևորված Սուրբ Հոգով՝ մենք չպետք է բավարարվենք նրանով, ինչ արդեն գոյություն ունի: Երբեմն կարծում ենք, որ կարող ենք միայն քրիստոնյաների հետ խոսել Հիսուսի մասին: Սակայն, հիշեք առաջին քրիստոնյաներին՝ նրանք Ավետարանը տեղեկացնում էին հեթանոսներին և հրեաներին: Այդ մարդիկ բոլորովին այլ հասկացողություն ունեին Աստծո, կյանքի, փրկության մասին: Եթե մենք թույլ ենք տալիս մեզ ոգեշնչվելու Սուրբ Հոգու կողմից, մենք կարող ենք դա անել: Մենք կարող ենք այն մարդկանց, ովքեր ոչ մի անգամ Աստծուն չեն հավատացել, կամ այլ հավատ ու այլ կրոն են ունեցել, Ավետարանը տեղեկացնել և նրանց հետ Հիսուսի մասին խոսել: Մենք չպետք է մտածենք, թե նրանք երբեք մեր վկայությունը չեն ընդունի միայն այն բանի համար, որ նրանք քրիստոնյաներ չեն: Պարզապես թույլ տուր Սուրբ Հոգուն՝ քեզ առաջնորդել: Շատերը դա ընդունում են, շատերը՝ չեն ընդունում, բայց դա մերը չէ, այլ Աստծո խնդիրը: Եկեք քաջություն ունենանք հետևելու Սուրբ Հոգու ոգեշնչմանը և բոլորին տեղեկացնենք Ավետարանը: Սա է այս Հոգեգալստյան տոնի ավետիսը: Մեր նպատակը Հիսուս Քրիստոսին նմանվելն է: Սուրբ Հոգու գործն է սա, նա ուզում է մեզ կերպարանափոխել, մեր մեջ գործել: Նա արաման ոգին է, ուժի և շարժման ոգին է: Մենք պետք է վստահենք նրան և թույլ տանք մեզ՝ առաջնորդվելու նրա կողմից: Նա միշտ մի ուղի կգտնի՝ մեզ խաղաղություն, ուրախություն և փրկություն տալու:.

Հիմնական մտքեր

- Աստված փրկում է նրանց, ովքեր իրենց առաջնորդել են տալիս Սուրբ Հոգու կողմից:
- Սուրբ Հոգին տալիս է հույս և հաստատակամություն:
- Նա մեզ մղում է գործելու մեր և մյուսների փրկության համար:
- Նա մեզ ունակ է դարձնում ստեղծել բաներ, որոնք դեռ գոյություն չունեն:

ԱԲՐԱՀԱՄԸ ԽՆԴՐՈՒՄ Է ՍՈԴՈՄ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ

ԸՍՏ ՄՈՎՍԵՍԻ 1-ԻՆ ԳՐՔԻ 18, 16-33-Ի

Երեք տղամարդ են այցելում Սառային ու Աբրահամին Մամբրեում և խոստանում նրանց, որ նրանք որդին կունենան, թեև երկուսն էլ արդեն շատ ծեր էին: Այդ տղամարդիկ գնում են Սոդոմի ուղղությամբ, Աբրահամը մի քիչ ուղեկցում է իր հյուրերին: Սոդոմում իր ընտանիքի հետ ապրում էր Աբրահամի եղբորորդի Ղովտը:



Աստված չէր ուզում Աբրահամից թաքցնել այն, ինչ մտադիր էր անել Սոդոմ քաղաքի հետ, քանի որ Աբրահամը պետք է շատ հետնորդներ ունենար: Նրա երեխաները, թոռները և նրանց երեխաները պետք է դառնային մի մեծ ու հզոր ազգ և անեին այն, ինչ Աստված կասեր նրանց: Աստված ասում է Աբրահամին. ,, Սոդոմացիների ու գոմորացիների աղաղակը ահագնացել, հասել է ինձ, նրանց մեղքերը խիստ շատացել են: Արդ, իջնեմ տեսնեմ, թե ինձ հասած նրանց աղաղակը համապատասխանու՞մ է նրանց կատարածին, թե՞ ոչ,,: Տղամարդիկ շարունակում են ճանապարհը, նրանք հրեշտակներ են: Աբրահամը մտնում է Աստծո առաջ կանգնած ու հարցնում է նրան. ,,Մի՞թե դու արդարին ամբարիշտի հետ կոչնչացնես, և արդարը նույն բանին կենթարկվի, ինչ որ ամբարիշտը,,: Եթե քաղաքում հիսուն արդար լինի, կոչնչացնե՞ս նրանց, չե՞ս խնայի ամբողջ քաղաքը հանուն այնտեղ գտնվող հիսուն արդարների: Ամբողջ աշխարհի դատավորը չպե՞տք է արադար դատի,,: Աստված պատասխանում է. ,, Եթե Սոդոմում ես գտնեմ հիսուն արդար, հանուն նրանց ես կխնայեմ ամբողջ քաղաքը,,:

Աբրահամն ասում է. ,, Հիմա համարձակվում եմ խոսել Տիրոջ հետ, թեև ես հող եմ ու մոխիր, իսկ եթե հիսուն արդարները պակասեն հինգ հոգով, այդ հինգի պատճառով դարձյա՞լ կկործանես ողջ քաղաքը,,:
Աստված պատասխանում է.
,, Չեմ կործանի, եթե այնտեղ գտնվի քառասունհինգ արդար,,:
Աբրահամը շարունակում է խոսել նրա հետ և ասում.,, Իսկ եթե այնտեղ գտնվի քառասուն արդա՞ր,,:
Աստված պատասխանում է.
,, Չեմ կործանի հանուն այդ քառասունի,,:
Աբրահամն ասում է. ,, Տեր, ինձ որևէ բան կպատահի՞, եթե շարունակեմ խոսել, իսկ եթե Սոդոմում գտնվի երեսուն արդա՞ր,,:
Աստված պատասխանում է.
,,Չեմ կործանի, եթե այնտեղ գտնվի երեսուն,,:
Աբրահամն ասում է. ,, Իսկ եթե այնտեղ գտվի քսա՞ն,,:
Աստված պատասխանում է.
,,Չեմ կործանի հանուն այդ քսանի,,:
Աբրահամն ասում է. ,,, Տեր, ինձ որևէ բան կպատահի՞, եթե դարձյալ խոսեմ, իսկ եթե այնտեղ գտնվի տասը արդա՞ր,,:
Աստված պատասխանում է.
,,Չեմ կործանի հանուն տասի,,:
Ապա Աստված գնում է, իսկ Աբրահամը վերադառնում է Մամբրե:

Աղբյուրը՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 04 / 2021, ձևավորումը՝ Միրելլա Ֆորտունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԱԲԻԹՀԱՅԻՆ՝ ԹԵՄԱՅՈՒՄ /ԳԱՆԱ/

Սա իմ համայնքն է: Մենք նման ենք մի մեծ ընտանիքի՝ միշտ բարեկամական միմյանց հանդեպ և պատրաստ օգնելու նրան, ով դրա կարիքն ունի: Վերջերս մենք մի նոր, գեղեցիկ եկեղեցու շենք ունեցանք:

Իմ անունը Թաբիթհա է: Ես 12 տարեկան եմ և հաճախում եմ 6-րդ դասարան: Երբ ես մեծանամ, կցանկանայի բժշկուհի դառնալ, որպեսզի կարողանամ կյանքեր փրկել: Իմ ընտանիքի հետ ես ապրում եմ Գանայում, ավելի ճիշտ՝ Թեմայում:

Թեման մայրաքաղաք Աքքրայի մոտ գտնվող մի մեծ քաղաք է: Թեման ամենից առաջ հայտնի է իր նավահանգստով, որտեղից նավերը կակաո և այլ ապրանքներ են տանում ողջ աշխարհով մեկ: Հավանաբար դուք կերել եք շոկոլադ, որը պատրաստվել է գանայական կակաոյով:

Գանայում կակաոյի ծառերի կողքին աճում են նաև թեյի թփեր, սուրճի տնկիներ և պլանտան կոչվող բանանի թփեր: Ի տարբերություն այն բանանի, որին դուք ծանոթ եք, պլանտան տեսակի բանանները քաղցր չեն: Մենք նախընտրում ենք դրանք ուտել տապակած՝ որպես խորտիկ կամ խավարտ: Դա կոչվում է քելեվել: Մենք՝ գանայացիներս, սիրում ենք կծու ուտել և բանանները համեմում ենք իմբիրով, կծու պղպեղով և քայեննյան բիբարով:

Անցած տարի ես շատ ժամանակ եմ անցկացրել իմ տատիկի ու պապիկի հետ: Այնտեղ ապրում են նաև իմ զարմիկներն ու զարմուհիները: Քանի որ ես միայնակ երեխա եմ, վայելում եմ նրանց հետ ընկերակցությունը: Այստեղ դուք տեսնում եք ինձ՝ իմ ամենասիրելի զարմուհի Վիվիանի հետ:

Ես շատ եմ սիրում, երբ մենք բոլորս գնում ենք եկեղեցի: Փոքրիկները պապիկի հետ գնում են մեքենայով, իսկ մենք՝ մեծերս՝ ոտքով: Մենք շատ հեռու չենք ապրում եկեղեցուց: Առաջ իմ պապիկը եղել է շրջանային ավագ, իսկ իմ հայրը ծառայում է որպես քարոզիչ: Իմ բարեկամներից մի քանիսը երգում են համայնքի երգչախմբում:

Վերջերս ես այցելում եմ կոնֆիրմանտների պարապմունքներին: Երբ այս լուսանկարը արվում էր, ես գնում էի կիրակնօրյա դպրոց: Դուք այստեղ տեսնում եք մեզ՝ կիրակնօրյա դպրոցի աշակերտներիս, մեր առաքյալ Բենջամին Օհենե- Սաֆֆոյի հետ: Դուք կարո՞ղ եք ինձ գտնել:

Ես հաճույքով եմ երգում: Մանկական երգչախմբում մենք սովորել ենք ,, Զարմանահրաշ ողորմածություն,, երգը: Մեր ուսուցիչները մեզ բացատրել են տեքստը, իսկ ես շատ հուզվեցի այդ երգը Օսու քաղաքում կոնֆիրմանտների ժամերգությանը երգելու իրավունքը ստանալու համար:

Աղբյուրը՝ Ամազիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակությունը 04/2021; լուսանկարները՝ մասնակիր ; wikipedia.org; ©harvepino / © Birgit / ©Brent Hofacker/ ©AlexZel; ©fanfan30 - stock.adobe.com

Տղամարդու և կնոջ հավասարությունը / մաս 2/

Շրջանային առաքյալների ժողովի պարբերականներից մեկը լուսաբանում և լրացնում է դավանաբանության մեկնաբանությունները մարդու Աստծուն նման լինելու մասին՝ տղամարդու և կնոջ հավասարության տեսանկյունից ելնելով: Եթե 3/2021-ի կոմյունիթիում 1-ին մասը լուսաբանում է աստվածաբանական հիմնավորումները արարչագործության երկու պատմությունների մեջ, ապա 2-րդ մասը պարզաբանում է վարդապետական եզրահանգումները:

Արարչագործության առաջին պատմությունը թույլ է տալիս ամփոփիչ ասել, որ աստվածային կամքով է պայմանավորված ոչ միայն մարդու երկսեռ լինելը, այլ նաև տղամարդու և կնոջ հավասարությունը: Երկու սեռերն էլ Աստծո պատկերն են՝ օժտված նույն արժանիքներով: Կնոջ ենթակայությունը տղամարդուն, ըստ Մովսեսի 1-ին գրքի, հակառակ է արարչագործությանը, դա համարվում է ոչ աստվածահաճո, այն մաս չի կազմում Աստծո բարի արարչագործության:

Արարչագործության երկրորդ պատմությունը ևս չի ընդունում կնոջ ենթակայությունը տղամարդուն: Ըստ Մովսեսի 1-ին գրքի 2-րդ-ի՝ մարդը գոյություն ունի նախևառաջ միայնակ, նրա սեռը տարբերակված չէ: Նրան պակասում էր իր ընկերակիցը, ով նրան նման կլիներ: Այս հիմքով Աստված ստեղծում է նույն արժանիքներով և իրավունքներով օժտված կողակցի, որպեսզի հաղթահարի մարդկային միայնությունը: Տղամարդն ու կինը ստեղծված են միմյանց համար, որպեսզի օգնեն միմյանց և այնպես գործեն, որ երկուսն էլ կարողանան լավ ու աստվածահաճո կյանք վարել:

Նկատառումներ մեղքի մեջ ընկնելու վերաբերյալ

Եկեղեցական ավանդության մեջ Օգոստոսիանոսից սկսած, Մովսեսի 1-ին գրքի 3-րդ տողում կարդում ենք մեղքի մեջ ընկնելու պատմության և ժառանգական մեղքի (peccator originale = սկզբնական մեղք) ծագման մասին: Այս առումով կնոջը, ով երկխոսության մեջ է մտնում օձի հետ, հաճախ է վերագրվում հեշտությամբ մոլորվողի և հատկապես մեղքի մեջ ընկնելու հակում ունեցողի դերը : Կնոջ մասին այս տեսակետը կար արդեն վաղ հրեականության շրջանում, ինչպես նաև Տիմոթեոսի Ա-ի 2, 14-ում. ,,Եվ Ադամը չխաբվեց, այլ կինը խաբվեց և հանցանք գործեց,,: Այստեղ Ադամը արդարացվում է, և աստվածային պատվիրանը խախտելու ողջ մեղադրանքը բարդվում է կնոջ վրա: Հռոմեացիների 5,12-ում, Պողոսը բոլորովին այլ բան է գրում, նա խոսում է միայն մարդու մասին, ով մեղք է գործել:,, Ինչպես որ մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին,,: Այդ ,, մարդ,, հասկացության մեջ հավասարապես նկատի է առնված տղամարդն ու կինը: Երկուսն էլ՝Ադամն ու Եվան, պատասխանատու են Աստծուց հեռանալու համար, և դրա համար երկուսն էլ կրում են պատիժ: Սրան համապատասխան էլ մեր դավանաբանության մեջ ևս խոսվում է մարդու մասին ընդհանուր առմամբ և սեռային ոչ մի տարբերակում չի արվում, երբ խոսքը գնում է մեղք գործելու մասին: Նա մարդն է, բոլոր մարդկանց նախատիպը, ով խաբվում է օձի կողմից և ընտրում սխալ ճանապարհ: Չարի ազդեցության ներքո մարդը փորձության ենթարկվեց և խախտեց Աստծո պատվիրանը: Մեղքը պատեց մարդուն, դրանով նա հեռացավ Աստծուց և ունեցավ հոգևոր մահ: Մարդը տեսավ իր մերկությունը, որի համար նա ամաչեց / Մովսես Ա 3, 7-10/: Ամոթը նշան է այն բանի, որ խախտվել է իր Արարչի հանդեպ մարդու ունեցած սկզբնական հավատարմությունը: Մարդու անհնազանդությունը հանգեցրեց նրան, որ Աստված նրա հետ միասնություն չկազմեց,, / ՆԱԵԴ 3,3,3/:

Աստծո կատարյալ պատկերը

Դավանաբանության մեջ խոսվում է ոչ միայն տղամարդու և կնոջ, այլ նաև Հիսուս Քրիստոսի մասին՝ որպես Աստծո նմանությամբ ստեղծվածի . ,, Մարդու Աստծուն նման լինելը վկայվում է նարով, որ Աստված մարդացավ Հիսուս Քրիստոսով, ով պատկերն է աներևույթ Աստծո,, / Կողոսացիներին 1,15/: Հիսուս Քրիստոսը երկրորդ Ադամն է / Կորնթ. Ա 15, 45,47/, ում մեջ կատարյալ ձևով տեսանելի է Աստծո պատկեր լինելը: Այն, որ մարդը ստեղծվել

է Աստծո պատկերով, չի ասում այն մասին, որ մարդու անձի մեջ առկա է Աստծո էությունը, դա այդպես է միայն Հիսուս Քրիստոսի պարագայում,,: Քրիստոնյաների համար Քրիստոսը որպես Աստծո պատկեր այն ձևի չափանիշն է, թե ինչպես պետք է իրականանա սեփական անձի Աստծու նման լինելը:

Հռոմեացիների 5,12-19-ում Քրիստոսն ու Ադամը հակադիր կերպարներ են: Եթե Ադամը ներկայացվում է մեղքի, պատժի և մահվան լույսի ներքո, ապա Քրիստոսը՝ արդարության, ողորմածության և կյանքի: Այնուամենայնիվ, Ադամը բնութագրվում է որպես պատկերը մեկի, ով պետք է գա,,/ Հռոմ. 5,14/: Ադամը, մարդն ընդհանրապես, վկայակոչվում է Քրիստոսով, չնայած իր մեղսագործ լինելուն, մեկով, ով կատարյալ ձևով ներկայացնում է աստվածային կյանքը:

Դրանից բացի, -իսկ սա մեծ նշանակություն ունի ներկայացված մտքերի համար- կորնթացիների Ա 15-ում ներկայացվում է ,, Աստծո պատկերի,, էսխատոլոգիական-ֆուտուրիստական նշանակությունը: Հիսուս Քրիստոսը՝ ,, նոր Ադամը,, հարություն առնվածների առաջնեկն է: Նրանով է բացահայտված մահացածների հարությունը, և նրանց համար, ովքեր հավատում են նրան, դա դարձել է համոզվածություն: Եթե Ադամը ծնվել է հողից և մեռնում է, ապա վերջին Ադամը՝ այսինքն՝ Քրիստոսը, երկնքից է և կենդանարար: Մաթթիաս Կոնրադը այս առումով նկատում է. ,, Եթե երկրային մարդիկ էապես բնորոշվում են Ադամի ,,անցողիկությամբ,,ապանրանք,ովքերպատկանում են Քրիստոսին, ունենում են բարձրյալ Քրիստոսի էությունը,,: Հարություն առնվածները ստանում են հոգևոր մարմին, որը համապատասխանում է հարություն առնված Քրիստոսին, և դրանով նրանց նվիրվում է գոյության մի ձև, որը թույլ է տալիս ունենալ կատարյալ միասնություն Աստծո հետ: Հարություն առնվածները կրում են ,, երկնային մարդու պատկերը,, այսինքն՝ Քրիստոսի պատկերը, և դրանով դառնում են Աստծո կատարյալ պատկեր: Այս միտքը կա նաև ֆիլիպպեցիների 3, 20,21-ում՝ նմանատիպ արտահայտությամբ. ,,Իսկ մեր քաղաքացիությունը երկնքում է, որտեղից և ակնկալում ենք Փրկչին՝ Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, որ նորոգելու է մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարանակից լինի իր փառավոր մարմնին, այն զորությամբ, որ կարող է հնազանդեցնել ամեն բան իր իշխանությանը,,:

Ուսուցողական հետևություններ

Աստվածաշնչյան վկայությունների հիման վրա տղամարդն ու կինը, կինն ու տղամարդը հավասարապես Աստծո պատկերն են: Մարտինա Բերը ճիշտ է նկատում, որ Մովսեսի Ա-ի 1-ում երաշխավորվում է ,, տղամարդու և կնոջ արարչագործական ֆունդամենտալ նույնականությունը,,: Երբ դավանաբանությունը խոսում է այն մասին, որ տղամարդն ու կինը ,, տարբեր,, են, ապա դրանով նկատի ունի նրանց կենսաբանական կառուցվածքը, նրանց տարբեր սեռերի լինելը, և ոչ թե ամբողջական անձին վերագրվող տարբերությունը: ,, Մարդ լինել նշանակում է լինել կոնկրետ սեռային կերպարանքով սուբյեկտ և անհատականություն՝ հոգևոր ունակություններով և ընդունակություններով, ազատությանը և խոսքին տիրապետող, գործել կարողացող, անձնական պատմություն ունեցող, հարաբերությունների մեջ ապրող և սիրել կարողացող,,: Այսինքն՝ տղամարդն ու կինը հավասար են, եթե անգամ կենսաբանորեն տարբեր զուգընկերներ են: Որպես ,,Աստծո պատկեր,,մարդու մասին խոսքը չպետք է ոչ մի դեպքում նույնացնի Աստծո և մարդու միջև առկա որակական անսահման տարբերությունը: Դավանաբանությունը միանշանակ խոսում է մարդու էությունը Աստծո էության հետ նույնացնելու անհնարինության մասին. ,, Որ մարդը ստեղծված է Աստծո նմանությամբ, չի խոսում այն մասին, որ մարդու անձի մեջ ներառված է Աստծո էությունը, դա այդպես է միայն Հիսուս Քրիստոսի մոտ / ՆԱԵԴ 3,3,2/: Երբ խոսվում է մարդու Աստծուն նման լինելու մասին, ապա դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ Աստծո տեսանկյունով է դա լինում: Մարդու Աստծո պատկերով լինելը ճանաչելի և հասկանալի է միայն հայտնվող և խոսող Աստծո հետ հարաբերության միջոցով: Աստծո ինքնաբացահայտումը մարդու համապատասխան հասկացողության, նրա արարված լինելու, նրա էության և աշխարհում նրա առաջադրանքի նախապայմանն է :

Որպես Աստծո պատկերի՝ մարդու մասին կարելի է իմաստալից խոսել այն դեպքում, եթե մի կողմից այն ընդունվի Աստծո տեսանկյանը լիովին համահունչ, իսկ մյուս կողմից՝ որպես աստվածային շնորհ ու առաջադրանք: Մարդու Աստծուն նման լինելը միշտ վկայվում է Աստծով, որպես մարդուն առաջին և բացարձակ սիրող ընկերակիցի: Ըստ այդմ, դավանաբանության մեջ գրված է. ,, Աստված մարդուն կարող է դարձնում ճանաչելու Արարչին, սիրելու նրան և փառաբանելու, եթե մարդը ապավինում է Աստծուն / ՆԱԵԴ 3,3,2/:

Մարդու՝ Աստծո պատկեր լինելու մասին խոսքը պետք է դիտարկել տվյալ ասպեկտենի ներքո :

,, Աստծո պատկեր ,, - իրականացում պատմության մեջ

Տղամարդու և կնոջ Աստծո պատկեր լինելու իրականացումը տարբեր ձևերով հաջողել է պատմության վաղ շրջանում, աշխարհիկ

պատմությանմեջնպատմությանէսխատոլոգիական նպատակում /վախճանաբանության մեջ/ :

- Մարդն ամենից առաջ կատարյալ արարչագործության մասն է, որը ցույց է տրվում Մովսեսի Ա-ի 1, 2-3-ում: Դա արարչագործություն է մեղքի մեջ ընկնելուց առաջ, որի մասին այսպես էր ասվում . ,, Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ լավ է,,: / Մովսես Ա 1, 2-3/: Մարդը իր նախնական վիճակով իսկապես անխաթար ձևով Աստծո պատկերն էր:

- Մարդը որպես ընկած արարչագործության մաս, այսինքն մեղքի մեջ ընկնելուց հետո, չէր կարող այլևս կատարյալ ձևով ներկայանալ որպես Աստծո պատկեր: Մարդը կառուցվածքային թերություն ուներ, որն արտահայտվում էր չարության, մեղքի և ապակառուցողականության տեսքով: Դա խանգարում էր մարդուն Աստծո նման լինելը ճիշտ պահել բոլոր ասպեկտներով և այն իրականացնել: Մարդկային պատմության համատեքստում, իր բոլոր սխալներով հանդերձ, մարդու Աստծո պատկերը լինելը թվում է անհասանելի իդեալ:.

- Մարդը խորհուրդների ու հավատքի շնորհիվ Հիսուս Քրիստոսի հետ կապի միջոցով վարում է էսխատոլոգիական գոյավիճակ, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի գալստյան և նոր արարչագործության հանդեպ հավատով լի կյանք: Նա ձգտում է ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին, ով Աստծո կատարյալ պատկերն է: Հարության մարմնով Աստծո պատկերին նման լինելը ստանում է իր կատարյալ իրականացումը նախ առաջնեկների և ապա բոլոր նրանց համար, ովքեր մասնակցություն ունեն արարչագործությանը: Այս առումով կենսաբանական տղամարդ կամ կին լինելը այլևս դեր չի խաղում, քանի որ հարություն առածները իրենց հոգևոր մարմնով Հիսուսի մի խոսքից հետո դառնում են անսեռ, այսինքն՝ ,, ինչպես հրեշտակներ երկնքում,, / Մարկոս 12,25/:

,, Աստծո պատկեր,, - անձնավորություն և միասնություն

Աստված մեկ Աստված է երեք անձով: Ինքն իրենով Աստված արդեն ընկերակից է ես –ի և դու-ի հետ: Ինքն իրենով Աստված միայնակ չէ, այլ միշտ միասնություն է կազմում աստվածային երեք անձների հետ՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու: ,, Երեք անունները իրենց էությամբ առանձին տարբեր աստվածային անձեր են: Իրականում Հայրը նույն Որդին չէ, և Որդին նույն Հայրը չէ, Սուրբ Հոգին նույն Հայրը կան Որդին չէ, քանի որ Հայրը վկայողն է, Որդին ցույց տրվածը, իսկ Սուրբ Հոգին այս երկուսից բխածը ,, / ՆԱԵԴ 3,2,4/: Երրորդություն Աստված ինքն իրենով շարժուն է, այսինքն՝ վկայող, ցույց տրված և բխող: Աստծո այս դինամիկական լինելը արտացոլվում է ,, Աստծո պատկերի,, մեջ, տղամարդու և կնոջ մեջ: Աստծո անձնավորությունը մարդու անձնավորության սկիզբն ու երաշխավորն է:

- Աստված ոչ միայն ինքն իր ներսում է հաղորդակցության մեջ, այլ նաև՝ դրսում: Այլոց շարքում դա երևում է նաև նրանում, որ նա իր խոսքով է կյանքի կոչում իրականությունը: Աստված խոսքի միջոցով է ձևավորում իրականությունը, այսպես է պարզաբանում արարչագործության առաջին պատմությունը: Աստված ոչ միայն այն միակն է, ով խոսքի միջոցով ստեղծում է իրականությունը, այլ նաև նա է, ով խոսում է իր կողմից արարվածի հետ: Արարչագործության երկու պատմություններում էլ Աստված խոսում է մարդու հետ: Նա ասում է իր պատկերով ստեղծվածին. ,, Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան,,/ Մովսես Ա 1,28/, և ,, Դու դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել,, /Մովսես Ա 2,16/: Այս խոսքի միջոցով Աստված դառնում է մարդու ընկերակիցը, իսկը մարդը՝ Աստծո: Աստծո- Ես- , նրա –Դու- ասելը ձևավորում է մարդու անձնավորությունը: Անձնավորությունը հիմնվում է ոչ թե մարդով, այլ ամենից առաջ՝ Աստծով: Դրա համար էլ դավանաբանության մեջ գրված է. ,, Աստվածային խոսքի համաձայն մարդը դառնում է անձ- Աստծո ,,դուն,, մարդուն դարձնում է ,,ես,, / ՆԱԵԴ 3,3,2/:

- Մարդը ստեղծված է մարդկային ընկերակցության համար, դրա համար էլ Աստված մարդու համար ստեղծում է մի ,,օգնական/ … / , ով համապատասխանում է նրան,, / Մովսես Ա 2,18/: Այն, որ կինը տղամարդու ,, օգնականն է,, չի նշանակում, որ նա նրա կյանքը պետք է հեշտացնի, նրա բաժին աշխատանքը իր վրա վերցնի, այլ վկայում է այն մասին, որ մարդը կարող է միայն ինքը լինել, եթե նա ընկերակից ունի: Միայն մարդու ընկերակցի, տղամարդու և կնոջ միջոցով է ,, եսը,, և ,,դուն,, դառնում իրականություն: Անհատականությունն ու անձնավորությունը ունեն իրենց էական հիմքը: Եթե կինը ,,համապատասխանում է,, տղամարդուն, ապա տղամարդն էլ ,, համապատասխանում է,, կնոջը և դա ունենում է իր հետևանքը՝ նրանք հավասարապես անհրաժեշտ են լինում միմյանց՝ նույն էությամբ և նույն արժանապատվությամբ:

- Եթե մարդը հակված է միասնության և դրա հետ է անմիջականորեն կապված նրա անձնավորությունը, ապա դա չի վերաբերում միայն տղամարդու և կնոջ միասնությանը, այլ մարդկային միասնությանն ընդհանրապես: Յուրգեն Մոլթմանի մեկնաբանությունները հենց սրա մասին են՝ ,, Մեկուսացած

անհատականությունը և միայնակ սուբյեկտը մարդկային լինելիության ոչ բավարար էակներ են, որովհետև նրանք չունեն Աստծո պատկերը: Համայնքի մեջ չկա նաև անձի առաջնայնություն: Անձն ու համայնքը նույն կյանքի պրոցեսի երկու կողմերն են,,: Այս հիմքի վրա են ձևավորվում գործընկերությունները, ընտանիքները, տոհմերը, ցեղերը, , ժողովուրդները և հասարակությունները, որոնք բոլորն էլ ձևավորվում են հանդիպումների ու հաղորդակցությունների միջոցով:

,, Աստծո պատկեր,, - տիրելու առաջադրանքը

,, Անձնավորության,, կողքին դավանաբանությունը նշում է ևս մի քանի ,, աստվածային էության հատկանիշներ,,; որոնք նվրվել են մարդուն՝ որպես Աստծո պատկերի, այլոց շարքում դրանց թվին է դասվում սերը, ազատությունը, և բանականությունը,, / ՆԱԵԴ 3,3,2/: Տղամարդն ու կինը ունեն զգացմունքային և ինտելեկտուալ հատկություններ, որոնք նրանք օգտագործում են առաջադրանքը կատարել կարողանալու համար՝ տիրելու արարչագործությանը և Աստծուն արարչագործության մեջ ներկայացնելու: ,, Տիրելու,, առաջադրանքը, սակայն, մարդուն իրավունք չի տալիս արարչագործության հետ վարվել կամայականորեն: Ավելին, նրան վերագրված է վարվել արարչագործության հետ այնպես, որը կհամապատասխանի աստվածային էությանը՝ իմաստությամբ, բարությամբ և սիրով,, / ՆԱԵԴ 3,3,2/: Կամայականությունը, դաժանությունը, սեփական հետաքրքրությունների բացարձականացումը դեմ են աստվածային կամքին: Դավանաբանության մեջ տպավորիչ վկայակոչվում է այն մասին, որ տղամարդն ու կինը նույն առաջադրանքն են ստացել՝,, երկրին տիրելու, այն ձևավորելու և պահպանելու,, / ՆԱԵԴ 3,3,2/: Տղամարդու և կնոջ ,, տիրակալությունը,, էականորեն ոչ մի ձևով չի տարբերվում, նրանք չունեն սոսկ իրենց հատուկ և միայն իրենց ,, վերաբերող,, տիրելու բնագավառներ,,; որը վերագրվում է սեռերի դերի ավանդական ըմբռնմանը: Այնպես չէ, որ տղամարդու գործունեության և կառուցելու ոլորտները ավելի լայն աշխարհ են ընդգրկում, իսկ կնոջը՝ ավելի փոքր՝ տուն, մասնագիտություն և ընտանիք: Որպես Աստծո պատկեր՝ երկու սեռերին էլ պոտենցիալ վստահված է երկրային արարչագործությունը որպես ամբողջություն: Այն կարող է միայն նրանց երկուսի կողմից պահպանվել և ձևավորվել: Այստեղից էլ հնարավոր չէ, որ նրանցից յուրաքանչյուրը առանձին իր համար կատարի Աստծո ,,տիրելու,, առաջադրանքը, ավելին, դա կարող է հաջողել միայն միասնությամբ և համերաշխությամբ:

Պահպանելն ու ձևավորելը իր առաջին կոնկրետ արտահայտությունը գտնում է սեռերի միասնական կյանքում կամ երեխաների դաստիարակության մեջ: Ամուսնական և ընտանեկան կյանքի ընթացքը կախված է հավասարապես տղամարդուց և կնոջից: Դրանից բացի, պահպանման և երկրային արարչագործության ձևավորման առաջադրանքին է պատկանում այն, որ տղամարդն ու կինը պետության մեջ, եկեղեցում և հասարակության մեջ պատասխանատվություն են կրում: Հասարակական իրականությունն ընդունելուց հրաժարվելը, դրան հակադրվելը հակառակ է և արարչագործության առաջադրանքին, և մերձավորին սիրելու պատվիրանին, որը տրված է բոլոր մարդկանց: Ի վերջո, տղամարդն ու կինը հավասարապես կոչված են գիտակցելու արարչագործության, որին պատկանում են բույսերն ու կենդանիները, պահպանման պատասխանատվությունը և ցուցաբերել համապատասխան վերաբերմունք:.

Եզրահանգում

- Տղամարդն ու կինը հավասարապես Աստծո պատկերն են:
- Տղամարդն ու կինը հավասարապես անհրաժեշտ են միմյանց, ունեն նույն էությունն ու նույն արժանապատվությունը:
- Տղամարդն ու կինը կանչված են ,, տիրելու,,: Երկու սեռերին էլ պատկանում են ինչպես առաջադրանքը, այնպես էլ արարչագործությունը պահելու և ձևավորելու պատասխանատվությունը :
- Արարչագործության աստվածաշնչյան պատմություններից ոչ մի դեպքում չի կարելի եզրակացնել, որ տղամարդն ու կինը տիրելու կամ գործունեության տարբեր ոլորտներ ունեն:
- Տղամարդու և կնոջ առաջադրանքների ըմբռնումը տարբեր է, քանի որ այն արտացոլվում է մարդկային հասարակության մեջ այլ սոցիալական և քաղաքական զարգացումների ներքո:

---

[1] Կոնրադ Մաթթիաս՝ Արարչագործությունը և նորարարչագործությունը Նոր կտակարանում: Շմիդ Կոնրադ՝ Արարչագործություն, Թյուբինգեն 2012:

[2] Բեր Մարտինա՝ Մարդ և Աստծո պատկեր լինել: Տղամարդու և կնոջ Աստծոն նման լինելու չափանիշը: Վյուրցբուրգ 2011 / Էրֆուրտյան աստվածաբանական ստուդիա 101/

[3] Յուրգեն Մոլթմանն՝ Աստվածը արարչագործության մեջ: Մյունխեն 1985:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսթրասսե 243,8051 Յյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

■ արևները՝ Օլիվեր Ոյութթենի

Կանանց ձեռնադրություն – որոշման ուղին

,,Կանանց ձեռնադրության,, հարցով խորհրդակցություններն անցնում են հաջորդ փուլ: Այդ մասին տեղեկացրեց գլխավոր առաքյալը 2021 –ի տարեկան հարցազրույցի ժամանակ: Նա տալիս է կոնկրետ ճանապարհային քարտեզը և ասում, թե այժմ որտեղ է հասել բանավեճը:

Սա մեծ և կարևոր թեմա է,- ասում է գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը: Բայց որոշման կայացումը հետևանքն է հետևյալ հիմնարար հարցերի՝

- Ի՞նչ է ասում Աստված:
- Ի՞նչ է ասում Աստվածաշունչը:
- Ի՞նչ է ասում եկեղեցին:
- Ի՞նչ է ասում տարածաշրջանային մշակույթը:

,, Միայն այն դեպքում, երբ բոլոր այս հարցերը կունենան ողջախոհ պատասխաններ, մենք կիմանանք, թե որ որոշումն ենք ունակ կայացնելու,, . պարզաբանում է միջազգային եկեղեցու ղեկավարը:

Խմբագրված՝ Հին կտակարան

Առաջին հարցին- Աստծո կամքով- արդեն պատասխան է տրված արարչագործության աստվածաշնչյան պատմության հիման վրա: Այդ մասին քննարկումներ են եղել 2020-ի նոյեմբերին տեղի ունեցած շրջանային առաքյալների ժողովում, և լույս է տեսել ,, Տղամարդու և կնոջ Աստծո պատկեր լինելու ,, թեմայի վերաբերյալ շրջաբերականը, որի հիմնական մտքերն են՝

- կինն ու տղամարդը հավասարապես Աստծո պատկերն են: Նրանք հավասարապես անհրաժեշտ են միմյանց և ունեն նույն էությունն ու նույն արժանապատվությունը:
- Կինն ու տղամարդը հավասարապես կոչված են պահպանելու և ձևավորելու արարչագործությունը: Այս առումով Աստված նրանց տիրելու կամ գործունեության տարբեր ոլորտներ չի հատկացրել:
- Կնոջ և տղամարդու առաջադրանքների բնույթը տարբեր է, քանի որ, այլոց թվում, այն արտացոլում է մարդկային հասարակության ներսում տիրող քաղաքական ու սոցիալական զարգացումները:

Ընթացքի մեջ՝ Նոր կտակարան

Երկրորդ հարցը- աստվածաշնչյան հայտնագործությունների համաձայն – կրկնակի ընթացքի մեջ է: ,, Մենք երկու էական, բովանդակային

Շրջանային առաքյալները գլխավոր առաքյալի հետ միասին քննարկում են կանանց ձեռնադրության թեման

դիտարկումներ ենք արել,, . մեկնաբանում է գլխավոր առաքյալը: Ի՞նչն է Հիսուսին դրդել, որ նա միայն տղամարդկանց կոչ անի առաքյալների սպասավորության: Կամ ի՞նչ է այդ մասին վաղ շրջանի եկեղեցին ասում Նոր կտակարանում, օրինակ, հովվական նամակներում:

2021-ի մայիսին տեղի ունեցած ժողովի թեման սա էր : Որոշումները դեռ ընթացքի մեջ են: ,, Շրջանային առաքյալները մեր զրույցների բովանդակության վերաբերյալ նախ կանցկացնեն քննարկումներ առաքյալների ժողովներում,,: Առաքյալները առիթ կունենան արտահայտվել այդ մասին: ,,2021-ի նոյեմբերին տեղի ունենալիք շրջանային առաքյալների ժողովում մենք նորից կանդրադառնանք այդ զրույցին,,:

Ապագայի խաչմերուկ

Հաջորդ հարցի պատասխանը հնարավոր չէ կանխատեսել: ,, Դրա համար դեռ շուտ է,, .այսպես ասաց եկեղեցու ղեկավարը: Այնուամենայնիվ, նրա համար պարզ է որոշում կայացնելու ծառը:

- Համապատասխանու՞մ է արդյոք Աստծո կամքին այն, որ կանայք չեն ձեռնադրվում: Եթե՝ այո, ապա կարիք չկա այլ խորհրդակցությունների:
- Եթե պատասխանը ոչ է՝ արդյո՞ք դա նշանակում է, որ Հիսուսը ավտոմատ կերպով միայն տղամարդկանց է կոչ անում առաքյալների սպասավորության, իսկ կանայք չեն կարող ձեռնադրվել: Եթե՝ այո, ապա կանանց ձեռնադրություն չի լինի:
- Եթե՝ ոչ, հարց է առաջանում՝ անհնա՞ր է կանանց ձեռնադրությունը ըստ Նոր կտակարանում տրված առաքյալների նամակների համապատասխան տեղեկությունների: Եթե՝ այո, ապա կանանց ձեռնադրության համար չկա աստվածաշնչյան հիմնավորում:
- Այս հարցին ոչ ասելու դեպքում՝ ուզու՞մ է եկեղեցին, օրինակ , շրջանային ռաքյալների ժողովում կանանց որևէ պաշտոնի համար ձեռնադրել, թե՝ ոչ: Եթե՝ այո, ապա դա հանգեցնում է տարածաշրջանային, սոցիալական հետևանքների՝
- կա՞ արդյոք կանանց ձեռնադրության անհրաժեշտություն որևէ ոլորտում, որևէ երկրում, որևէ տարածաշրջանում: Եթե պատասխանը ոչ է, ապա այդտեղ կարող է կնոջը ոչ մի պաշտոն չտրվել:
- Այո պատասխանի դեպքում՝ տվյալ տարածաշրջանի համայնքներն ու հասարակությունը ընդունու՞մ են արդյոք կանանց ձեռնադրության գաղափարը: Ոչ պատասխանի դեպքում այդտեղ կանաց ձեռնադրություն չի լինի:
- Եթե պատասխանը այո լինի, ապա տվյալ տարածաշրջանում, երկրում, համայնքում կարող են կանայք ձեռնադրվել:

,, Ուրեմն՝ մենք ունենք երկար պրոցես մեր առաջ,, . հստակեցնում է գլխավոր առաքյալը: Եվ նույնը վերաբերում է նրան, ինչը նա ասել է միջանկյալ կարգավիճակում պաշտոնի ընկալման վերաբերյալ: Ես կարող եմ հասկանալ, որ ամենուրեք մի քիչ անհամբերություն կա: Ես գիտակցում եմ նաև, որ սպասումները շատ տարբեր են: Սակայն, ես խոստանում եմ, որ մենք այս առիթով հիմնարար աշխատանք կկատարենք: Իհարկե, դա շատ ժամանակ կպահանջի, սակայն եկեղեցու միասնության համար դա կարևոր է,,:

Քրիստոսը՝ մեր ապագան

,, Ձեր բոլոր հոգսերը նրա վրա գցեցեք, որովհետև նա է, որ հոգում է ձեր մասին,,։

Պետրոս Ա 5,7

New Apostolic Church
International